

4-րդ թր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

էջ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- Քրիստոսեան Հ. Կ. — Գրիգոր Նարեկացիի եւ
«Երգ-Երգոց»ի մեկնութիւնը 1
Յովհաննէսեան Հ. Վ. — Խարթալի Աւետա-
րանը 18

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ

- ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. — Պատմութիւն Հա-
յոց Ազգամատոյցին (Շար.) 10

ԳՐԱԿԱՆ

- Յովհաննէսեան Հ. Վ. — 1960ի բանաստեղ-
ծական արտադրութիւնը և Հայաստանի
մէջ 20

- FEYDIT FREDERIC. — La Comédie et la
Satire en Arménie. Baronian et Odian
(Suite et fin) 24

- Յովհաննէսեան Հ. Վ. — Դէպի Աւարայր —
Քաղաքացիական շորս արարով: Արար Ա. 34

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

- Քրիստեան Յ. — Առանկեր Միսիթար Գոշի,
Հրա. Էմ. Պիլագեան 49
— — Խաչատուր Կեչառեցի, Հրա. Մ. Թ.
Աղալրեղեան 50

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

- Յովհաննէսեան Հ. Վ. — Նկարիչ Սեդրաք
Նազարեան (Մարտիկ) 31
Հ. Ն. Տ. Ն. — Գերպի. Կարապետ Եպիսկ.
Ամատունի 45

SOMMAIRE

PAGE

FILOLOGIE

- KIBARIAN P. C. — Grégoire de Narék et
l'exégèse du « Cantique des Cantiques » 1
HOVHANNESSIAN P. V. — L'Evangéliste de
Khartal 18

LITURGIE

- HATSOUNI P. VARDAN. — Histoire du Bré-
viaire Arménien (Suite) 10

LITTERATURE

- HOVHANNESSIAN P. V. — La poésie de
1960 en Arménie soviétique 20

- FEYDIT FREDERIC. — La Comédie et la
Satire en Arménie. Baronian et Odian
(Suite et fin) 24

- HOVHANNESSIAN P. V. — Vers Avarayr -
drame en quatre actes. Acte I^o 34

RECENSIONS

- KURDIAN H. — Les fables de Mekhitar Goche,
publiées par Em. Bivazian 49
— — — Oeuvres de Khatchatur Ketcha-
retzi, publiées par M. Th. Avdalbeghian 50

ECHO ARMENIEN

- HOVHANNESSIAN P. V. — Le peintre Setrak
Nazarian (Mardik) 31
P. N. D. N. — L'Exarque Apostolique S. Ex.
Mgr. Garabed Amadouni 45



1843 - 1961
ՀԺԹ. ՏԱՐԻ

ԹԻԻ 1 - 2

ՅՈՒՆՈՒՄԱՐ - ՓԵՏՐՈՒՄԱՐ

ԲԱՉՄԱՎԵՅ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXIX^o année, 1961, N. 1 - 2 Janvier - Fevrier

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ԵՒ

«ԵՐԳ - ԵՐԳՈՑ»Ի ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

Գրիգոր Նարեկացիի՝ Նարեկ Աղթա-
մատեանի հեղինակին վերագրուած եր-
կասիրութեանց շարքին կը յիշատակուի
նաեւ Սողոմոնի Երգ-Երգոցի Մեկնութիւն
մը¹: Նարեկի, ինչպէս նաեւ Յայսմա-
տուրքներու ձեռագիրներու մէջ, երբ Գրի-
գորի կենսագրութիւնը կը ներկայացուի,
գրեթէ միշտ Նարեկի հեղինակէն յօրին-
ուած կը յիշուի այդ Մեկնութիւնը կամ
բացայայտ կերպով եւ կամ ընդհանուր
ձեւով մը: Դժբախտաբար Յայսմատուրք-
ներու եւ Նարեկ Աղթամատեանի մեր
ձեռքը հասած ձեռագիրները շատ հին
չեն. Նարեկի ամենահին ձեռագիրը, ո՛ր-
քան ինծի ծանօթ է, 1173ին Ներսէս Լամ-
բրոնացիի համար ընդօրինակուածն է,
որու մէջ Գրիգոր Նարեկացիի կազմած
Աղթամատեանի Յիշատակարանէն յետոյ
ըրուած է համառօտ կենսագրականը Նա-
րեկի հեղինակին՝ հաւանօրէն Ն. Լամբրո-

նացիէ պատրաստուած. կ'ըսուի հոն թէ
«Ունիմք եւ խաւսս նորա ի վերայ Երգոյ
Երգոյն համառուտ»²: Այս կենսագրու-
թիւնները միշտ նոյն ձեւով եւ ընդարձա-
կութեամբ չեն ներկայանար ձեռագիրնե-
րու մէջ. ինչ որ բերանացի աւանդուել է
սերունդէ սերունդ, մերթ զմերթ զարգանալով եւ
փոփոխուելով դարէ դար՝ ընդարձակած
եւ ճիւղացուցած է այդ կենսագրականնե-
րը. երբեմն ալ տեղերու եւ անձերու ա-
նուններու նոյնութիւնը անձերու ալ նոյ-
նութիւն ստեղծելու պատճառ եղած է:
Հետեւաբար ստոյգ եւ անձերու ապրած
ժամանակէն աւանդուած տեղեկութիւն-
ներ ունենալու համար, պարտաւոր ենք
դիմել ուղղակի աղբիւրներուն, այսինքն
հեղինակներու կողմէ իրենց երկասիրու-
թեանց համար կազմուած Յիշատակա-
րաններուն, երբ ասոնք գոյութիւն ունին:
Այս պարագային երեք են սոյն Յիշատա-

1. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից
վանականի Մատենագրութիւնը. Վենետիկ,
Ս. Ղազար, 1840, էջ 271:

2. Գրեգին Ա. Կաթողիկոս. Յիշատակարանը
ձեռագրաց. Ա. հտ. Անթիլիաս, 1951 էջ 145:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

Խաղիոյ համար . . . 3000 Լիր
Արտասահմանի համար . . . 6 Տարար
Մէկ թիւը՝ 250 լիր - 0,50 Տարար

PRIX DE L'ABONNEMENT ANNUEL

Pour l'Italie. . . 3000 Lires
Pour l'Etranger . . 6 Dollars
Le Numéro: 250 Lires - 0,50 Dollars

Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti — Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia
Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia



637-73

կարանները. Սաչի եւ Աստուածածնի ներ-
բողներուն Յիշատակարանը, գրուած
983ին. Նարեկ Աղօթամատեանի Յի-
շատակարանը, գրուած 1002-3ին. Երզ-
նուոյցի Մեկնութեան Յիշատակարանը,
կազմուած 977ին. Երեք Յիշատակարան-
ներն ալ գրուած են այդ երկասիրութիւն-
ները յօրինողներէն:

Սաչի եւ Աստուածածնի ներբողներուն
Յիշատակարանը գրուած է 983 թուակա-
նին եւ ուղղուած Մովսէս Ստեփանոս եւ
պիսկոպոսին, որու խնդրանքով յօրինած
է Գրիգոր Նարեկացի Ապարանից Սաչի
պատմութիւնը ու ասոր յաջորդող ճառը:
Այս Յիշատակարանին մէջ հեղինակը ինք-
զինք կը ներկայացնէ. «Ես Գրիգոր՝ յետին
վարժապետաց եւ կրտսեր բանասիրաց, որ-
դի դասեր եղբոր հօր Անանիայի, հոգե-
զարդ եւ մտավարժ փիլիսոփայի, եւ ըստ
վարուց մաքրութեան կրօնից գովելոյ եւ
հոգակելոյ». ու կը խնդրէ յիշել «զիս եւ
զեղբայրն իմ զՅովհաննէս ցանկալի ա-
նուն ի միում կարգի, որ գիտնականն է
եւ հանճարեղ իմաստասէր քան զիս առա-
ւել յամենայնի: Եւ յամենայնի կեցցեն
մեր անձինք ընդ քեզ, որպէս եւ քոյզ ողի
միացեալ ընդ մեզ միջնորդաւ էութեան
բանի, եւն.»³:

1002-3ին է Նարեկ Աղօթամատեանի Յի-
շատակարանը, որու մէջ յիշելով նախ
տարին՝ երբ աւարտած է Նարեկը, կ'ըսէ.
«... Հիմնեցի, կառուցի... արձանացու-
ցի... կացուցի, ցուցի, հաստատելով ի
հրաշակերութիւն միագոյ իբրի վրազմա-
ստեղծեան գրուագոյ գրութեան այսմ սո-
փերի արգասաւորութեան, ես Գրիգոր
կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց
եւ կրտսեր վարժապետաց, գործակցու-
թեամբ եղբոր իմոյ ընտրելոյ Յովհաննէս

կոչեցելոյ՝ Նարեկայ մեծափառ եւ բար-
ձրապատիւ ուխտի վանականի. որք իբրեւ
գմի մարմին բանական ի յերկուց առ մի
կերպարան շինելոյ դիմաց կենցաղավարե-
լով, ոչ միայն հարազատք, այլ եւ միա-
շունչք միակրօնք համապատիւք զուգա-
հաւանք, ի քառից աչաց առ մի եւ նոյն
չաւիղ խորհրդոյ տեսեալք, եւն.»⁴: Կը
համարիմ թէ պարտաւոր ենք անկասկած
ընդունիլ թէ այս երկու Յիշատակարան-
ներուն գրողն է միեւնոյն Գրիգորը, որդի
Հայր Անանիայի եղբոր աղջկան, կրօնա-
ւոր քահանայ եւ Նարեկ վանքի վանա-
կան. ունի եղբայր մը Յովհաննէս անու-
նով եւ սա ալ վանական Նարեկ վանքին
ու եղբոր պէս վարժապետ եւ բանասէր,
քանի որ Գրիգոր կ'ըսէ թէ ոչ միայն հա-
րազատներ են ու միակրօն, այլ նաեւ
համապատիւք: Աւանդութիւնն ալ կ'ըն-
դունի թէ Յովհաննէս Նարեկի վանահայր
եղած ըլլայ. կան ալ որ կը համարին թէ
Գրիգորէ առաջ վախճանած ըլլայ:

Տեսնենք նաեւ Երզ-Երզնցի Մեկնու-
թեան Յիշատակարանը. «Ի Նիջ թուա-
կան Հայոց (մեր 977 թուականին) հար-
կեցայ ես Գրիգոր քահանայ ի Նարեկայ,
որդի Տեառն Սոսրովայ Անձաւացեաց ե-
պիսկոպոսի, ի Գուրգենայ աստուածասէր
քրիստոնապաւկեալ արքայէ յորդույ Ա-
բուսահլի Համապատիւ թագաւորի՝ առ ի
մեկնութիւնս ահաւոր բանիցն Սողոմոնի,
եւ բացայայտել զխորին ծածուկսն որ ի
նոսա, որ են քաղցր առ ի լսել: ... Այս
ի հոգս եղեալ թագաւորին այսպիսի իրի,
յղէ առ իս մի անգամ եւ երկիցս. որում
ոչ իշխեցի ընդդիմանալ, զի ծանեայ եթէ
աստուածահաճոյ է հրամանն, եւ մեկնեցի
զերգս երդոյն նորին հրամանաւ»⁵: Այս
մեկնութեան հեղինակ կը ներկայանայ

մեր պատմագիրներու Գուրգէնի ընծայած
թուականին: Ասողիկի համաձայն Գուրգէն ու
եղբայրը Սենեքերիմ միասին կը թագաւորեն
990ին: Գուրգէն կը վախճանի 1003ին, ու կը
մնայ միայնակ Սենեքերիմ: Նպատակս չէ հոս
այս հարցով զբաղիլ:

Գրիգոր մը՝ քահանայ եւ Նարեկէն, կը
համարիմ Նարեկի գիւղէն. եւ որդի է Ան-
ձեւացեաց Սոսրով եպիսկոպոսին. այս-
չափ միայն, առանց ուրիշ մանրամասնու-
թիւններ նշանակելու: Ընդհակառակն
Սաչի եւ Աստուածածնի ներբողներուն եւ
Նարեկ Աղօթամատեանի հեղինակ Գրի-
գորը վանական է Նարեկի Ուխտին, ունի
երէց եղբայր մը Յովհաննէս անունով,
նոյնպէս վանական Նարեկի. հօրը մասին
ոեւէ յիշատակութիւն կը պակասի. բայց
կը յիշատակուի մէկ անգամ մայրը՝ որ
աղջիկն է Նարեկի վանականին՝ Անանիա-
յի եղբորը: Արդ արդեօք այս երկու Գրի-
գորները՝ Երզ-Երզնցի Մեկնութեան ու
ճառերու եւ Նարեկի հեղինակի, միեւ-
նո՞յն անձն են թէ տարբեր անձն են, ի-
րարու ժամանակակից ըլլալով հանգեմ:

Գրիգոր Նարեկացիի բոլոր կենսագրու-
թեանց մէջ, ըլլայ ձեռագիրներու մէջ ա-
ւանդուածներուն, ինչպէս նաեւ մատենա-
դրական գրքերու մէջ ներկայացուածնե-
րուն, այդ երկու Գրիգորները նոյնացուած
են: Սակայն երբ մտադիր ուշադրութեամբ
կարդանք Երզ-Երզնցի Մեկնութեան Յի-
շատակարանը ու բաղդատենք Սաչի եւ
Աստուածածնի ճառերուն եւ Նարեկ Աղ-
թամատեանի Յիշատակարաններուն հետ,
ինքնաբերաբար տարալոյս մը կը ծագի
մեր մտքին մէջ, թէ այդ Յիշատակարան-
ներու երկու Գրիգորները նոյն անձն չըլ-
լան: Այս անդրադարձութիւնը կատարած
է ժամանակին Հ. Ն. Ակիւնեան եւ 1943ին
Պէյրուի հրատարակուող «Աղդարար»ի
երրորդ թիւին մէջ լոյս տեսնող գրու-
թեամբ մը զանազանած է երկու Գրիգոր-
ներ. մէկը Հայր Անանիա Նարեկացիի եղ-
բոր աղջկան որդին, որ 983ին գրած է
Սաչի ու Աստուածածնի ներբողները, եւ
1002-3ին ալ Նարեկ Աղօթագիրքը, հեղի-
նակէն Ողբերգութիւն կոչուած. իսկ եր-

կորդ Գրիգորը Անձեւացեաց Սոսրով ե-
պիսկոպոսին որդին է, հաւանորէն ամուս-
նացեալ քահանայ, որ 977ին գրած է Երզ-
նցի Մեկնութիւնը. իրենն է նաեւ Առ
Կնաւայ վանականս գրուած թուղթն ալ:
Տիար Շաւարշ Նարեկեան ալ Փարիզի
«Յառաջ» օրաթերթին մէջ հրատարակե-
լով Գրիգոր Նարեկացիի ծնունդի հազար-
ամեակի առիթով Մարտիի մէջ իր կա-
տարած բանախօսութիւնը, երբ քննու-
թեան կ'ենթարկէ Գրիգորի եղբայրներուն
թիւը, կը տարուի կասկած մը՝ առանց
սակայն այդ կասկածը փարատել ուղե-
լով: Անձանթ են ինծի այն ապացոյց-
ները, որոնց վրայ յեցած Մեծարդոյ Հ.
Ակիւնեան կը հաստատէ իր տեսութիւնը.
սակայն կը համարիմ թէ իր ենթադրու-
թիւնը հիմնաւորեալ է: Չեն պակսիր փաս-
տեր եւ վկայութիւններ Երզնցի Մեկ-
նութիւնը յօրինող Գրիգորը նկատելու
տարբեր անձ մը Նարեկ Աղօթամատեանը
գրող Գրիգորէն:

Առաջինը ժամանակի հարցն է: Նախ
նկատենք ժամանակը Գրիգոր Նարեկացիի
վարժապետ համարուած Անանիայի, որու
եղբոր աղջիկը մայրն է Գրիգորի: Անա-
նիա Նարեկացիի ոչ միայն ընդհանուր
կերպով ժամանակը յայտնող, այլ տարի-
ներն ալ ճշգրտող վկայութիւններ չեն պակ-
սիր: Ունինք Սաչի ու Աստուածածնի ճա-
ռերուն Յիշատակարանը, գրուած 983ին:
Գրիգորի խօսքերը եւ գովեստի ձեւը հան-
դէպ Անանիայի՝ կը զգացնեն թէ այդ չոր-
ջանին Անանիա գեռ կ'ապրէր. ընդհակա-
ռակն Նարեկ Աղօթամատեանի Յիշատա-
րանին մէջ բացակայ է Անանիայի անունը:
Սակայն մենք ունինք Ուխտանէսի Պատ-
մութեան գիրքը՝⁶ յօրինուած Անանիայի
յանձնարարութեամբ: Ուխտանէս իր Պատ-
մութեան առաջին գրքին առաջին գլուխը
նուիրած է իր այս գործին յօրինման պա-

3. Սրբոյ Հօրն Գր. Նարեկայ վանից վանականի
Մատենագրութիւնք. էջ 422:

4. Նոյն՝ էջ 268:

5. Նոյն՝ էջ 367: Յիշատակարանին 977 թուա-
կանը, իբր վասպուրականի Գուրգէն թագա-
ւորին իշխանութեան տարին, չի համաձայնի:

6. Ակիւնեան Հ. Ն. Նարեկ մատենա Ողբերգու-
թեան Ս. Գրիգոր Նարեկացիի. (գրախօս-
ուած). «Հանդէս Ամս», 1949, էջ 118:

7. «Յառաջ» օրաթերթ Փարիզի. 1951, թիւ 11
Մարտի:

8. Ուխտանէս եպիսկոպոս. Պատմութիւն Հայոց
(հատուած առաջին). Վաղարշապատ, 1871:

բազմաբնույթ. զբոսն զբուրեան բուն պատճառը եղած է Անանիա, որու հանդէպ պատմագիրը կը տածէ հիացում եւ յարգանքի ու սիրոյ խոր զգացում. կը գովէ զինքը իբր «հոգեւոր Հեղինակ եւ հոգակաւոր Հոգեւոր» (էջ 15): Ինքզինք կ'անուանէ «յետին եւ տրուպ աշակերտ» կամ թէ որդիս՝ թէ ախորժելի է քում պատուասիրութեանը, եւ կամ թէ ինձ համարձակելի անուանեալս Ուխտանէս» (էջ 10): Այս Պատմութեան երկու առաջին զբոսը յօրինուած ժամանակ Անանիա տակաւին կ'ապրէր. երկրորդ զբոսն Ա. զուրկը կը սկզբնաւորէ Ուխտանէս՝ խօսքը ուղղելով Անանիայի: Ուխտանէս իր Պատմութեան զբոսը գրած է ինչիկ Ա. Կաթողիկոսի եւ Սմբատ Բ. Թագաւորի ժամանակ: Սմբատ Երկրորդ կը թագաւորէ 977-989ին: Իսկ ինչիկ Առաջին կը գահակալէ Ասողիկի համաձայն 972-992ին: Մատթէոս Ուսուցիցի կը զնէ 985 - 991. պատմագիրները սովորաբար կը հետեւին Ասողիկի ժամանակագրութեան: Բայց բարեբախտաբար Ուխտանէս Պատմութեան առաջին զբոսն առաջին զլսուն մէջ խօսելով զբոսն զբոսեան պատճառներուն մասին, կը յիշատակէ Անանիայի մէկ այցելութիւնը ինչիկ Ա. Կաթողիկոսին, եւ այդ առիթով ունեցած տեսակցութիւնը ինքնին Ուխտանէսի հետ՝ իր գրելիք Պատմութեան գործին նկատմամբ:

9. Նոյն՝ էջ 11-12:

10. Ալինեան Հ. Ն. Կիւրիոն Կաթողիկոս Վրաց. Վիեննա, 1910, էջ 50:

11. Նոյն՝ էջ 52:

Այս տուեաններով հնարաւոր է նաեւ ընդունել որ Անանիա Նարեկացի՝ ժամանակակից ըլլալով հանդերձ Անանիա Մոկացի կաթողիկոսին, անոր ընկերակից եղած ըլլայ, ինչպէս կը համարի Միաբան (Գ. Տէր Մկրտչեան) իր հրատարակած Անանիա Նարեկացիի Գիրք խոստովանութեան, Վաղարշապատ, 1892, Յատկաբանի 2 էջին մէջ: Ա. Մոկացի կաթողիկոսը Ասողիկի համաձայն վախճանած է 965ին «բարեւոյ ծերացեալ», որով շուրջ քսան տարի առաջ Անանիա Նարեկացիէ: Գիրք խոստովանութեանը կարծես գրուած է «ի ժամ վախճանի», երբ կը յուսար «ուրախ լինել ի

Այս տեսակցութիւնը տեղի կ'ունենայ Ախուրեան գետի ափին «յաւուրս ամարայնոյ, յամսեանն տրէ որ օր տասն ու մին էր ամսոյն, յաւուր կիւրակէի յիններորդ ժամուն»⁹: Պրոսպէի համաձայն ինչիկ Կաթողիկոսի գահակալութեան 972-992 Քաանամեայ շրջանին տրէ ամսու 11ին կիրակի կրնար պատահել միայն 973, 980 եւ 987 տարիներուն¹⁰: 973ը զանց ընելով, որովհետեւ Սմբատի Թագաւորութիւնը, որու ժամանակ Ուխտանէս գրած է իր Պատմութիւնը, կը սկսի 977ին. պէտք ենք ըսել թէ այդ տեսակցութիւնը տեղի ունեցած ըլլալու է 980ին, եւ կամ 987ին: Տեսանք արդէն թէ Գր. Նարեկացիի ինչիկ ձառնին Յիշատակարանը՝ գրուած 983ին, կը նկատէ Անանիա գեռ ողջ. որով այս երկու վկայութիւնները համաձայն են այդ թուականին համար: Հ. Ներսէս Ալինեան Ուխտանէսի Պատմութեան զբոսը յօրինման տարին կը համարի 987 թուականը¹¹: Սակայն Ալինեանի այս վարկածը իբր պարզ ենթադրութիւն ներկատելով ու անտեսելով, կարելի է իբր ստոյգ ընդունել թէ Անանիա Նարեկացի 983ի ատենները տակաւին կ'ապրէր: Եթէ ուղեւորը տալ Անանիայի 75 տարի, պէտք ենք ըսել թէ իր ծնունդը պատահած ըլլալու է 910ի ատենները: Չենք գիտեր թէ իր եղբայրը՝ որու աղջիկը մայր եղած է Գրիգոր Նարեկացիի, Անանիայէ կրտսեր

սէր հոգեւոր սիրովն Աստուծոյ» (էջ 1): Այս Գիրք խոստովանութեանը՝ եթէ Ա. Նարեկացիին է, ուղղուած է «սնդակից» մը որ օտարացած է, եւ «ի ծննդենէ տէր գոլով մինչեւ ի ծերութիւն» ծառայի անտեղեակ բարուց եւ հաւատոց: Նախահարք եւ դաւառաւ, եւ աղաւ եւ ախորժակովք, եւ վարժիւք եւ կենակցութեամբ ի բնէ ի միասին կրանիւք միակամ վարելով առ Աստուած եւ առ մարդիկ» են: Այս բոլորին տեղ ճշգրտութիւն եւ անձկութիւն, հալածումն եւ աւտարութիւն, բարկութիւն ոչ իրաւացի, եւ պրտմութիւն ոչ բանականաբար բաժին ինձ եւ վրձակ ի քէն սահմանեալ: Անանիա Նարեկացիի մահը հաւանօրէն պատահած է ինչիկ Ա. Կաթողիկոսի ժամանակ (972-992) մերձաւորապէս. արդեօք իրեն ուղղուած է:

թէ տարեց էր. ընդունինք որ երէց եղբայրն ըլլայ ու տաս տարուան երիցութիւն մը տանք. հետեւաբար Անանիայի եղբայրը ծնած կ'ըլլայ 900ի ժամանակները: Արդ խոսքով Անձեւացեաց եպիսկոպոսը պէտք է տարեց եղած ըլլայ թէ՛ Անանիայէ ու թէ՛ ասոր եղբորմէն:

Պատմութիւնը մեղի չէ աւանդած խոսքով Անձեւացեաց եպիսկոպոսին ծննդեան ու մահուան թուականները. սակայն դիտենք որոշակի թէ եպիսկոպոս էր 950ին, երբ կը վերջացնէ Պատարագի Մեկնութեան իր գիրքը¹²: Կը գրէ այս Մեկնութիւնը հարկադրուած իր հովուական պաշտօնին պահանջներէն. հետեւաբար 950է քանի մը տարի առաջ ապահովապէս եպիսկոպոսացած էր: Գիտենք նաեւ որ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը ստացած է Անանիա Մոկացի կաթողիկոսէն (941-965): Խոսքով 954ին եկեղեցական ինչ ինչ նիւթերու շուրջ կը յայտնէ անձնական իր տեսակէտները, կ'ընդունի նաեւ որ կարգի տարբերութիւն գոյութիւն չունի եպիսկոպոսութեան ու հայրապետութեան մէջ, ըլլալով «մի փառք եւ մի պատիւ հայրապետին եւ եպիսկոպոսին»¹³: Իր յայտնած այս տեսութիւնները հաճոյ չեն անցնիր Անանիա Մոկացի Կաթողիկոսին. յաճախ կ'աղաչէ որ խոսքով ետ կենայ նման նորութիւններ յայտնելէ, մանաւանդ որ «այր համեստ եւ գիտնաւոր եւ ալեօք ծերութեամբ զարգացեալ»¹⁴ անձ մըն էր՝ Մոկացիի բառերով: Սակայն խոսքով չ'ունկնդրեր Կաթողիկոսին ազդարարութեանը. կը բանադրուի ու կը վախճանի այդ բանադրուած վիճակի մէջ 965է առաջ: Այս խնդրին շուրջ Մոկացիի գրած նամակները անթուական են. սակայն գիտենք Ասողիկէ թէ Մոկացի կաթողիկոսը մեռած է 965ին¹⁵. որով խոսքով

մեռած է այդ թուականէն առաջ: Տալով խոսքովի գոնէ եօթանասունը հինգ տարի մահուան ժամանակ, քանի որ արդէն իսկ 954ին «այլօք ծերութեամբ զարգացեալ» էր, իր ծնունդը պարտաւոր ենք զննելու գոնէ 890ի ատենները եթէ ոչ առաջ. այսպէս խոսքով քսան տարի աւելի տարեց կ'ըլլայ Անանիա Նարեկացիէ, եւ շուրջ տաս տարի ալ ասոր եղբորմէն. հետեւաբար խոսքով չէր կրնար կնութեան առնել Անանիա Նարեկացիի եղբոր աղջիկը, որ ամէնէն կանուխ 920-925ին պէտք է որ ծնած ըլլայ:

Ժամանակի հարցը այնքան դժուարութիւններ կը ծնան, երբ նկատենք նաեւ Գրիգոր Նարեկացիի՝ Աղօթամատեանի հեղինակին տարիքը: Պատմութիւնը աւանդած չէ մեղի Գրիգորի ծնունդի տարին. բայց երբ կը վերջացնէ Նարեկ Աղօթամատեանը 1002-3ին, հաւանօրէն ծերացեալ տարիքի մէջ չէր: Այս մասին կը գրէ Նարեկի վերջին գլուխներէն մէկուն մէջ (Բան 2է). «Եւ եթէ հասից յամս ծերութեան քեւ առաջնորդեալ արժանիս մահու»: Չեմ կարծեր որ պարզ գրելու ձեւ մ'ըլլան այս խօսքերը. աւանդութիւնն ալ կը համարի որ վախճանած ըլլայ երկտասարդական հասակի մէջ: Հ. Ալինեան Գրիգորի ծնունդը կը զնէ 963ին, որով 1003ին քառամասնեայ կ'ըլլայ. բայց մենք ենթադրենք որ յիշատեալ եղած ըլլայ այդ ժամանակ. ծնած կ'ըլլայ 950-3ին, երբ խոսքով Անձեւացի արդէն եպիսկոպոսացած էր մէկ քանի տարիներէ ի վեր. կանամբի եպիսկոպոս մ'ընդունիլ հայ եկեղեցւոյ մէջ, մանաւանդ այդ դարուն՝ անտեղի է:

Մ. Արեղեան¹⁶ եւ ուրիշներ այս անտեղութեան ազատ մնալու համար Գրիգորի ծնունդը կը զնեն 940-949ի ատենները:

12. Խոսքովի Անձեւացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն աղօթից պատարագի. Վիեննա, 1869, էջ 66, 67:

13. Տէր Մկրտչեան Գալուստ. Անանիա Մոկացի. «Արարատ», 1897, էջ 91:

14. «Արարատ», 1897, էջ 276, սիւն Բ:

15. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. հրատ. Ս. Մախաթեանի, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 181:

16. Արեղեան Ակադ. Մ. Հայոց հին Գրականութեան

Սակայն պէտք է յիշել որ Գրիգոր ունի երէց եղբայրներ ալ: Յովհաննէս՝ իրմէ յիշատակուած. Սահակ՝ իբր որդի Սոսրով Անձեւացիի: Այս բոլորը նկատելով, Սոսրովի ամուսնութիւնը պարտաւոր ենք դնել զոնէ 930ին, եթէ ոչ աւելի կանուխ, երբ ինքը հաւանորէն քառասնամեայ էր: Արդ 930ին Անանիա Նարեկացիի եղբոր աղջիկը կամ հինգ եւ կամ տաս տարեկան պէտք է եղած ըլլայ:

Միեւնոյն արդիւնքը պիտի տայ մեզի քննութիւնը նաեւ Երգ-Երգոցի Մեկնութեան եւ Պատարագի Մեկնութեան Յիշատակարաններուն:

Երգ-Երգոցի Մեկնութեան Յիշատակարանը զրոյր է ինքնին մեկնիչը, ինչպէս տեսանք արդէն, Գրիգոր քահանայ «ի Նարեկայ», հաւանորէն Նարեկ գիւղէն, եւ որդի Սոսրով Անձեւացոյց եպիսկոպոսի. հետեւաբար վանական մը է, այլ պարզ քահանայ մը, զուցէ ամուսնացեալ՝ ինչպէս կ'ուզէ Հ. Ակիրեան: Հետեւաբար Աղթամատեանի հեղինակ Գրիգորէն տարբեր անձ մը կ'երեւի:

Սոսրով Անձեւացիի Պատարագի Մեկնութեան Յիշատակարանը տարբեր ձևով կազմուած է: Նախ հեղինակը՝ Սոսրով կը խօսի առաջին գէմքով, տեղեկացնելով թէ ինչպէս եպիսկոպոսական պաշտօնին բերումով հարկադրուել է յօրինել այդ աղօթքներուն մեկնութիւնը իբր պարզաբանութիւն: Այս խօսքերուն կը կցուի յաւելուած Յիշատակարան մը, ուր կ'ըսուի. «Շնորհիւն Աստուծոյ եղեւ մեկնութիւն այսմ սուրբ զրոյցս ի ձեռն Սոսրովա Անձեւացեաց եպիսկոպոսի, յոյժ հետեւողի սուրբ պատուիրանաց Աստուծոյ, զոր մեզ ի գովասացութիւն ոչ պաշտօնի, զի մի գայթակղեալիք լուսլղղ ունայն համարիլ զինչն ասացեալսս վասն զորոյ հայր իմ ըստ մարմնոյ, զոր ոչ եմ արժանի կոչիլ որդի»¹⁷: Ինքզինք Սոսրով

վի որդի յայտարարող այս անձը զժրախտաբար չի տար մեզի իր անունը. ձեռագիրը զրուած է 1252ին: Այս միեւնոյն յաւելուածը ունինք նաեւ ուրիշ ձեռագրի մը մէջ, զրուած 1272ին, բայց այս անգամ անուն մըն ալ նշանակուած է. «Մեկնութիւն զրոյցս այսորիկ եղեւ ի ձեռն Սոսրովա Անձեւացեաց եպիսկոպոսի յոյժ հետեւողի պատուիրանացն Աստուծոյ՝ ի թուականութեանս Հայոց ՅՂԹ, եւ առաջին զծագրութիւն սուրբ զրոյցս եղեւ ձեռամբ Սահակ որդոյ Նորին՝ Տեառն Սոսրովու, զորս յիշեացէ տէրն գթութեամբ»¹⁸: Այս տղերքը՝ հաւանորէն երբորդ անձէ մը զրուած, ոչ միայն կը տեղեկացնեն թէ Մեկնութիւնը յօրինուած է 950 թուականին, այլ թէ առաջին ընդօրինակութիւնը կատարուած է Սոսրովի որդիէն՝ Սահակէ: Այսպէս կ'ուենանք անուն մը, մինչդեռ առաջին Յիշատակարանի Յաւելուածը յօրինողը առանց անուններ տալու, ինքզինք կը ներկայացնէ իբր որդի Սոսրով Անձեւացիի: Ունինք երբորդ ձեռագիր մըն ալ 1278 թուականէն, որու Յիշատակարանն ալ նման է 1272ի ձեռագրին եւ ասոր մէջ ալ կը պակսի Գրիգորի անունը:

Յաջորդ զարեւու ձեռագիրներու մէջ այս Յիշատակարանները կ'ընդարձակուին եւ կը ճոխանան նոր տուեալներով: Այսպէս էջմիածնի թիւ 1449/1445 ձեռագրին մէջ, Գարեգին Ա. կաթողիկոսէ Ժէ-ԺԸ զարեւու զրուութիւն նկատուած, կ'ըսուի թէ Պատարագի Մեկնութիւնը կը յօրինուի «ի ձեռն Սոսրովայ Անձեւացեաց եպիսկոպոսի, հօր սրբոյն Գրիգորի Նարեկացոյ, յոյժ հետեւողի պատուիրանացն Աստուծոյ, զոր մեզ եւ գովել անձա՛հ է, զի մի գայթակղեալիք ի նոյն, վասն գոյն նորուն հայր իմ ըստ մարմնոյ, որ չեմ արժանի կոչիլ որդի եւ ոչ վարձկան...: Արդ առաջին սուրբ զրոյս այսորիկ զծա-

զրուութիւն եղեւ ձեռամբ Սահակայ որդոյ տեառն Սոսրովու սոյն սուրբ զրոյցս մեկնողին»¹⁹: Այսպէս սոյն յաւելուած Յիշատակարանը զրոյր կ'ըլլայ ինքնին Գրիգոր Նարեկացի, Նարեկ Աղթամատեանին հեղինակը, որ ինքզինքը սուրբ ալ կ'որակէ. այս ամէնը ցոյց կու տայ թէ ինչպէս երբեմն Յիշատակարան յօրինողները տարօրինակ միամտութեամբ կը կատարէին իրենց պաշտօնը:

Լաւ է տեսնել նաեւ Ս. Ղազար տպագրուած Սոսրովի Պատարագի Մեկնութիւնն ալ: Ասոր իբր ընդգիր ծառայած է, ինչպէս կը յայտարարէ հրատարակողը (Յառաջարան, չորրորդ էջ), 1336ին զրուած օրինակ մը: Այս օրինակին Յաւելուած Յիշատակարանը աւելի պարզ է ու նախնականը կ'երեւի: Յետ ըսելու թէ Մեկնութիւնը զրոյր է Սոսրով Անձեւացիի, «զոր գովել անձա՛հ է... վասն գոյն նորուն հայր իմ ըստ մարմնոյ, որոյ չեմ արժանի կոչիլ որդի եւ ոչ վարձկան...» հուսկ կը յաւելու. «Այլ յոյժ ամաչեցեալ եւ տարակոյս գտանիմ ես Գրիգոր, պարտաւոր պատուիրանաց սուրբ Գրոց»²⁰: Յետոյ կը յայտնէ նաեւ թէ առաջին ընդօրինակութիւնը կատարուած է Սոսրովի Սահակ որդիէն: Այս Յիշատակարանը զուցէ ըլլայ նախնականը, որու համաձայն Յիշատակարանը յօրինողն է Գրիգոր՝ որդի Սոսրովի, Երգ-Երգոցի Մեկնութիւնը յօրինողը, ոչ թէ «Գրիգոր Նարեկացի» ինչպէս էր թ. 1449/1445 ձեռագրին մէջ. Գրիգոր, որ այդ գրքի Յիշատակարանին մէջ ինքզինքը պարզ քահանայ եւ Անձեւացոյց եպիսկոպոսին դաւալը կը դաւանի:

Միեւնոյն երեւոյթը կը նկատուի նաեւ Նարեկ Աղթամատեանի հեղինակին՝ Գրիգոր Նարեկացիի կենսագրութիւնը մեզի աւանդող բաղմամբիւ Յիշատակարաններու եւ Յայտնուութիւններու մէջ:

Նարեկի ձեռագիրներէն ամենահինն է, որքան ծանօթ եմ ես, Երեւանի թիւ 1561/1566 ձեռագիրը, ընդօրինակուած 1173ին Ներսէս Լամբրոնացիի համար: Այս ձեռագիրը մեզի կ'ընծայէ նաեւ համառօտ կենսագրութիւնը Գր. Նարեկացիի, եւ կը համարուի որ Ն. Լամբրոնացիէ զրուած ըլլայ: Կենսագրութիւնը յօրինողը կը զըրէ. «Սուրբ Հայրս մեր աստուածաշնորհ քահանայս եւ կրաւաւոր Գրիգոր էր ի Նարեկայ վանից ի Հայս՝ ի դաւառն Վասպուրականի, ի Ժամանակի Թաղաւորացն Հոռոմոց Վասլի եւ Կոստանդեայ, ոչ տիւրէին Հայոց աշխարհին. իսկ Վասպուրականի Թաղաւոր է Սենաքերիմ բարեպաշտ յԱրծրունեաց՝ ի Թուականի Հայոց ՆԼԲ. ի հայրապետութեան Տեառն Վահանայ. եւ էր սա որդի դստեր եղբաւր Հօր Անանիայ ճգնաւոր վարդապետի եւ Նարեկայ վանից Առաջնորդի: Սա զերանելիս Գրիգոր անդրանիկ եղբարբ իւրով, որոյ անուն Յովհաննէս, անոյց եւ դաստիարակեաց ի մանկութենէ ընդ աստուածաշունչ զրոյց կրթութիւնս եւ վախճանեալ եղբաւրն՝ մնաց միայնակ յերկս առաքինութեան»²¹: Առանց նկատել ուղեւոր Կենսագրութեան մէջ սպրդած պատմական անձնութիւնները, միայն պարտաւոր ենք զիտելու որ զրոյր իբր կարեւոր թուական ընտրել է Սաչի եւ Աստուածածնի ճառերուն Յիշատակարանի տարին, որ է 983. սակայն Վահան կաթողիկոս վախճանած էր արդէն 972ին, ու իրեն յաջորդեր էր Սաչիկ Ա.: Այս կենսագրականը շարագրողը չի գիտեր, եւ կամ կ'անտեսէ թէ Գրիգոր Նարեկացիի հայրը Սոսրով Անձեւացին է. բայց տեղեակ է որ Գր. Նարեկացիի ընծայուած երկասիրութեանց մէջ կայ նաեւ Երգ-Երգոցի վրայ գրուած մը, վասնզի քիչ յետոյ կ'ըսէ. «Ունիմք եւ խաւսս սորա ի վերայ Երգոյ Երգոյն համառու»²². զիտէ նաեւ թէ

19. Նոյն՝ էջ 115-116:

20. Մեկնութիւն Պատարագի, Վենետիկ, 1869, էջ 66-67:

21. Յիշատակարանը Զեռագրաց, Ա. հտ. Անթիւ-լիս, 1951, էջ 143-144:

22. Նոյն՝ էջ 145:

17. Գարեգին Ս. Կաթողիկոս. Յիշատակարանը թեան Պատմութիւն. Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի հրատ. Երեւան, Գիրք Ա. 1944, էջ 519:

18. Նոյն՝ էջ 113-114:

Գրիգոր «յերիտասարդական տիս վախճանեալ» է: Հաւանորէն Լամբրոնացի եւ կամ ուլ որ է այս կենսագրականը յօրինողը, տեսած պիտի չըլլայ Երգ-Երգոցի Մեկնութիւնը. վասնզի անոր Յիշատակաբանէն պիտի տեղեկանար թէ խոսքով Անձեւացի է հայրը այդ Մեկնութիւնը գրող Գրիգոր քահանային. եւ որովհետեւ Գրիգոր Նարեկացիի կ'ընծայէ Երգ-Երգոցի մեկնութիւնը, ապահովապէս պիտի յիշատակէր նաեւ Գրիգորի հայրը, ինչպէս յիշատակած է մայրը: Այս 1173 տարւոյ ձեռագրի Յիշատակարանին ոճով կարժուած է նաեւ Երեւանի թ. 1047 ձեռագրի-նը²³:

Մինչդեռ Երեւանի թ. 1559/1566 ձեռագրիւր հետեւելով հանդերձ նախորդին, նորութիւններ կ'ընծայէ: Այս ձեռագրի Յիշատակարանին համաձայն Գրիգորիոս էր «ի դաւառէն վասպուրականի, որդի տեառն խաւսրովու Անձեւացեալ եպիսկոպոսի»²⁴: Կը համարեմ թէ այս ձեռագրիւր նոյնը ըլլայ Լ. Ս. Պաշկեանի ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի Յիշատակարաններ հատորին 536 էջի «Մատեան Ողբերգութեան Գրիգորի Նարեկացւոյ» ձեռագրին հետ, որ կը կրէ 1566 թիւը, ու գրուած է 1381 տարին. ըսել է արդէն իսկ այդ թուականին Գրիգոր Նարեկացի կը համարուէր որդի Անձեւացւոյ խոսքով եպիսկոպոսին: Այս թուականը կարելի է կանխել, հիմնուած Ս. Ղազարու Մատեանագրանի Ձեռագրիներու թ. 588 Նարեկ Աղօթամատեանին վկայութեան վրայ. ընդօրինակուած է 1324ին եւ Գրիգորի կենսագրականը նման է 1559/1566 թիւ ձեռագրի ընծայածին. մանաւանդ թէ ուղիղ ընթերցում մ'ունի, երբ Յովհաննէսի մահէն վերջ կ'ըսէ «Գրիգոր միայնակ մընաց». ընդհակառակն էլ միաձայնի կը զնէ «Գրիգոր միայնակեաց». մինչ մեր Մատեանագրանի թ. 1027, 1365ին գրուած Նարեկը մեղի կու տայ Գրիգորի կենսա-

գրականը Լամբրոնացիի ձեռագրին նմանութեամբ: Յայտաւորեցներու ներկայացուցած Գրիգոր Նարեկացիի վարքերն ալ յօրինուած են այս նոր տուեալներով ու այսպէս ընդհանրացուցած խոսքով Անձեւացիի հայրութիւնը Նարեկ Աղօթամատեանի հեղինակին. հայրութիւն մը ստեղծուած Գրիգորի մահէն դարեր վերջ ու քիչ քիչ ամէնէն ընդունուած:

Ճիշտ է որ ձեռագրիներու Յիշատակարանները թանկագին տեղեկութիւններ կը պարունակեն գրողներու ժամանակաշրջանին պատահած դէպքերու եւ ապրած անձերու մասին. բայց երբ զիրենք դարեր կանխող իրադարձութիւններ ուզեն ծանօթագրել, կամ անձերու մասին տեղեկացընել, հարկաւոր է ամէն ինչ ջննդելէ անցընել եւ անոր համեմատ ընդունիլ: Գրիգոր Նարեկացիի կենսագրականները, ինչպէս նաեւ խոսքով Անձեւացիի Պատարագի Մեկնութեան Յաւելուած Յիշատակարանը, ինչ ձեռով որ մեր ձեռքը հասած են, բացայայտ ցոյց կու տան թէ մերթ ինչպիսի անգոյ իրականութիւններ կը ստեղծուին: Յիշատակարան յօրինողները միամտօրէն ամենեւին չեն կասկածած թէ ինչպէս խոսքով Անձեւացի, որ Մեկնութեան Յիշատակարանին համաձայն 950ին արդէն իսկ ժամանակէ մը ի վեր եպիսկոպոսացած էր, կրնար հայրն ըլլալ Գրիգոր Նարեկացիի, որ 1002-3ին կ'աւարտէր իր Աղօթամատեանը, եւ Յիշատակարան յօրինողները կ'ընդունէին թէ երիտասարդ տարիքի մէջ վախճանած է, հետեւաբար դո՛ւնէ 40-50ամեայ, երիտասարդ կոչուելու համար:

Մեր այս նկատած հարցին մէջ պէտք է նաեւ չանտեսել այն տարբերութիւնը որ գոյութիւն ունի երկու Գրիգորներու դրելու ձեւին ու գործածած լեզուին մէջ, Նարեկ Աղօթամատեանի հեղինակին ու Երգ-Երգոցի Մեկնութիւնը գրողին: Ճիշտ է որ աննկատ ընելու չէ երկու գրքերուն

մէջ եղած նիւթի տարբերութիւնը. մէկը ընթացիկ լեզուով պարզաբանութիւն մըն է այլաբանական գրքի մը, որ պէտք ունի լուսարանուելու եւ բացատրուելու, ընթերցողէն դիւրաւ հասկցուելու համար. մեկնիչին նպատակը ըմբռնելի ընել է իր դադափարը եւ խօսքը, եւ ոչ թէ աղբիւ կարգացողին վրայ: Իսկ Նարեկը աղօթքի անուան եւ ձեւին ներքեւ քերթուածներ կը ներկայացնէ, եւ գրական այս տեսակը աւելի արուեստ, աւելի հետադարձական ձեւեր կը պահանջէ: Սակայն երբ ճանչնանք Աղօթամատեանին հեղինակ Գրիգոր Նարեկացիի խառնուածքը եւ անձնականութիւնը, այս տեսակէտը անգօր կը մնայ: Երկու Գրիգորներու մէջ տարբերութիւնը նիւթին համաձայն տարբեր լեզու եւ դրելու տարբեր ձեւ գործածելուն մէջ չի կայանար, այլ աւելի խոր է. տարբերութիւնը երկու Գրիգորներու հոգեկան կազմին, խառնուածքին, անձնականութեան, ստացած գրական կրթութեան մէջ է: Գրիգոր Նարեկացի արտակարգ եւ ինքնատիպ անձնականութիւն մըն է, գոնէ գրական մարդին մէջ. ունի իրեն յատուկ կերպ եւ ոճ նկատելու եւ ըմբռնելու իրերը, դէպքերը, կեանքը. իր այս դիտելու եւ նկատելու կերպին կը հետեւի ներկայացնելու եւ պատկերացնելու անձնական ձեւ մը: Գրութեան մէջ ինքը կը ջանայ ամէն ինչ առարկայացնել, նիւթականացընել, զգալի ընել: Յետոյ իրեն համար ո'ւէ է իր, դէպք, իրադարձութիւն իրենց սովորական երեւոյթէն դատ թաքուն բան մ'ալ ունին, որ հարկաւոր է չանտեսել ու պատկերացնել. չ'ախորժիր ներկայացնել իրերը իրենց սովորական կեցուածքով, այլ կը ճգնի թափանցել էութեան խորը, հոգին վեր հանել, մասնաւորել. ասկէ է նաեւ որ չի գոհանար գործածական բառերով, կը փնտռէ աւելի յարմարներ իր նկատումներուն, այդ բառերուն նոր իմաստներ կ'ընծայէ, նորեր կը բարդէ եւ կամ կ'ածանցէ. ասկէ նաեւ նիւթին եւ զգացողութեան ուժգնութեան համաձայն թուարկումը, կուտակումը բառերու եւ

կամ ասացուածքներու, ինչպէս նաեւ յաճախակի գործածութիւնը փոխաբերութեանց, պատկերներու, հետադարձականութեան, չըջարանութեան: Գուցէ գրելու այս ձեւը մեղի համար արուեստակեալ ըլլալու երեւոյթ մ'ունի, սակայն բանաստեղծին համար արտայայտուելու հաճելի ձեւերէն է. իր հոգեկան եւ կամ զգայական վիճակները՝ նիւթի պահանջներուն համաձայն, աւելի ճշգրիտ պատկերացնելու: Այս ձեւով կ'արտայայտուի ոչ միայն քերթողական եւ ճառական գործերու մէջ, այլ նաեւ ընթացիկ, պատմական իրողութիւններու արձանագրութեան մէջ. այսպէս են իր Յիշատակարանները. այսպէս իր Գանձերն ալ, որ հասարակաց քարոզ-աղօթքներ են: Դաւալան է կարողալ խաչի եւ Աստուածածնի ներբողներուն Յիշատակարանը: Նախ կարդանք Նարեկ Աղօթամատեանի Յիշատակարանը. «Ըստ հոլովման ընթացից ամանակաց յառաջ շարժութեան, որ ըստ լրապատարն նշուլադեղն արփիաճաճանչ լուսակիրն օրակշիռն մշտափարատն ակնապարար աւանան արեւու՝ ստեղծականն արուեստի, որ համբարէ հոլովէ կուտէ ամաց յոլովութիւն ի չափս տարւոյ շնչասպառ եւ կենդանանորդ առուղեկան յաւիտենիս, ի յաւարտումն կատարման իններեակ յորելինին, ի սկիզբն պսակելոյ մտի տասնեկին յարեթական տոհմիս տումարի, յետ երից ամաց անցելոց՝ որ զկնի գալըստեան ի կայս եւ ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արեւելից՝ յաղթող եւ մեծ կայսերն Հոռոմոց Բասլի... ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի... հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբաղմաստեղ-նեան դրուագս գրութեան այսմ սոփերի արգասաւորի, եւ Գրիգոր կրօնաւոր քահանայ» են: խաչի եւ Աստուածածնի ճառերուն Յիշատակարանին մէջ ալ, Նարեկի Յիշատակարանէն քսան տարի կանուխ գրուած, շատ տարբեր ոճով չի դրեր. «... ըստ հայցման հաճութեան բարեկէր կամաց երջանկիդ, եւ գրութեան

23. Նոյն՝ էջ 146:

24. Նոյն՝ էջ 141:

նամակի ձերում պատճենի, յօրինեալ չա-
րադրեցի զպատմութեանն դովեստ, եւ
զճառքս ներբողենի: Նկարեալ հաստա-
տեալ ի դեղ պատկերի զիմաց սոփեստի
սպիտակափայլ լուսափառ դաշտի քար-
տենիդ. մտրակեալ յընթացս սորա աս-
պարիսի զըթուենս դրչիս, անշունչ խօսո-
ղիս անքայլ ընթացողիս, անձայն հնչո-
ղի, անդուլ պատմողի եւ անսայթաքելի
քարոզչի.» եւն.:

Իսկ երբ կարդանք Երգ-Երգոցի Մեկ-
նութեան Յիշատակարանը, ինքզինքնիս կը
դտնենք անձի մը առջեւ, որ ուսումնասէր
է եւ զարգացած, զիտէ զրեւ, տիրացած
է հայ լեզուին ու ծանօթ հայ լեզուով
գոյութիւն ունեցող երկասիրութեանց,
Ազաթանդեղոսի դրքին, Յաճախապատու-
մին, Եղիշէի, Վկայարանութեանց, Ոսկե-
բերանի, և Գր. Նազիւնդացիի գործերուն,
իրեն առաջնորդ ունի Գրիգոր Նիւսաբին,
սակայն ընթացիկ ու հարթ զրոյ մըն է,

չի յաջողիր դունաւորել, պատկերոտ ը-
նել, խանդ զնել, բարձրանալ, հետտորու-
թիւն ընել, ինչպէս նաեւ լեզուական ար-
ուեստակութիւններ. Երգ-Երգոցը մեծա-
պէս յարմար էր իր այլարանական ու
պատկերոտ եւ զգայնոտ ձեւով մղել մեկ-
նիչը դոնէ երանդաւորելու եւ պատկերոտ
ընելու իր խօսքը: Նարեկ Աղօթամատեա-
նին հեղինակը մեկնելով Երգ-Երգոցը ա-
պահովապէս մեր ձեռքը հասածէն տար-
բեր Մեկնութեան գիրք մը պիտի տար:
Հետեւաբար Երգ-Երգոցի Մեկնութիւնը
կարելի չէ նկատել ծնունդ Նարեկ Աղօ-
թամատեանի հեղինակին մտքին ու սըր-
տին, իրեն նման բանաստեղծի խառնը-
ւածքով ու արուեստաւորման խոր տրա-
մադրութեամբ օժտուած անձի մը: Երգ-
Երգոցի Մեկնութիւնը յօրինողն է Գրիգոր
Քահանայ, Նարեկի զիւղէն, որդի Խոսրով
Անձեւացոց եպիսկոպոսին:

Հ. Կ. ՔԻՊԱՐԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԱՅՈՑ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՅԻՆ

(Շար. տես «Բազմալեզու» 1960, թ. 11-12, էջ 288)

3. — Առաւօտեան ժամ. — ա) Մաքե-
նեաց Խրատները Առաւօտեան պաշտա-
մունքը կը յարեն Գիշերայինին՝ առանց
վերստին «Օրհնեա տէր» ըսելու: Գր.
Սկեւոացին կ'իմացնէ՝ թէ երբ Գիշերա-
յինը զանց կ'ըլլար, այն ժամանակ Առա-
ւօտեան սկիզբը «տան զՕրհնեա տէրն»
(415): Խրատները ունին գուրդաներու
բաժանումն ալ, որ բաւական կը տարբերի
Խոսրովի նշանակածէն, եւ է այսպէս. «Ի
վճար գորողային՝ այն որ զգորղայն սկը-
սաւ, զՓառքն ասէ, եւ միւս ընկերն ասէ
զԱյծմ եւ միշտն, եւ զԱմէնն թողու: Սար-

կաւազն առնթեր կալով՝ ասէ. եւ եւս
խաղաղութեան: Դպիրն՝ Կեցո տէր: Ժո-
ղովուրդն՝ Տէր ողորմեա: Սարկաւազն
ասէ. Արքեմ տէր այս անուն: Եւ նա
ասէ. Արքեմութիւն եւ փառք Հաւր: Սար-
կաւազն ասէ. Արքեմ տէր: Եպիսկո-
պոսն՝ ասէ. Խաղաղութիւն ամենեցուն:
Սաղմոսերդուն՝ որ զԱյծմ եւ միշտն ա-
սաց, ասէ. Ամէն եւ ընդ հոգւոյդ բում:
Եւ ապա սկսանի զսաղմոսն՝ կամ յաջորդ
գուրդան: Չարմախի է՝ որ այս հրա-
հանգը կու տայ Առաւօտեան կանոննե-
րուն մէջ, ուր Խոսրով Գիշերայիններուն

հետ կապած է: Կը կարծեմ թէ սահմանը
նոյն է բոլոր կանոններուն համար, եւ
պատահաբար ինկած Առաւօտուն:

բ) Ս. Ղազարու երկաթագիր ձեռնոցին
(թ. 169) Դանիէլը, 1284ի ժամագրքին
Առաջարանը, անոր յարակից խրատները
(Յաւ. Գ. 3) եւ Մարիունի աղօթամատոյ-
ցը Հարցը կը բաժնեն վեց մասերու. Օրի-
նեալ եւ տէր, Վասն Արքեմաւու, Օրի-
նեալ եւ դու տէր. — Օրինեցէք ամենայն
գործք, Օրինեցէք տիւր, Օրինեցէք Խրա-
յէլ: Այս բաժանումը յայտնի էր ամէ-
նուն: Գործքին երեքը նաեւ նշանակուած
բաղմաթիւ շարականներու մէջ, եւ աւելի
պահոց, որով Գ. Տաթեւացին կրնար վը-
կայել՝ թէ «վեց փոխ է սաղմոսն այն»
(Հրց. 637): Ս. Ղազարու 1218ի Մաշտոցը
(թ. 199) առանց երրորդ փոխը կը կոչէ
«գլխոք Հարցն՝ Գործովքն հանդերձ»: Շար-
ականին գործատունները — ինչպէս
կ'անուանէ Գր. Սկեւոացին՝ փոխին (415)
եւ Տաթեւացին՝ շարականի Գործքին տու-
ները (Ամբ. 336) — երբ յիշեալ բաժանու-
մէն աւելի ըլլային, ինչպէս է զոր օրինակ
Յարութեան Դկ. երկրորդ Հարցին հնդա-
տուն Գործքը, փոխին ուրիշ երկու սոո-
րաբաժանում ալ կ'ըլլար, որոնցմէ մէկը
ծանօթ է ինծի՝ «Օրհնեցէք աղբերք» տան
վրայ, որ նշանակուած իսկ է ինչ ինչ չա-
րականներու մէջ. զոր օրինակ Յովնանու
եւ պահոց ԳԶ. վեցերորդ Հարցերուն, որ
ունին կցորդս, «Աղբերք զտէր օրհնեցէք»:

Նկատեցինք շարականներու խառնումը
փոխերուն հետ, որոնց մէջ եւ Հարցին,
որուն հանդամանքը կը գտնենք Տաթեւա-
ցիին քով. «Ամէն շարական, կ'ըսէ, կրկին
ասեմք. վասն է՞ր զՀարցն երեքիկն ա-
սեմք... եւ Գործատունն կրկին ասի»: Եւ
կու տայ զանազան քմածին պատճառներ
(Հրց. 637), որ խնդրին հետ կապ չու-
նին: Երեցս կրկնութեան բնական պատ-
ճառն այս է՝ որ Հարցին համարներն ա-
ւելի շատ են. եւ անոնց մէջ պահելու բա-
ժանման հասարակաց չափն ու բաւեցնե-
լու համար շարականին տունները՝ կ'երեք-
կնէին առաջին մասին մէջ, ուր կրկնումը

բաւական էր Գործքին մէջ: Նոյն սովո-
րութիւնը կը յիշեցնէ եւ «Խրատք ժամոյ.
կարգաւորութեան», զրեւով այսպէս.
«զհարցն ասեն զամէն տուն երեք անգամ»
եւ «երկու անգամ ասի Գործատունն»:

գ) Տեսանք կանոնադրութիւն Փառերը,
որոնց հետ կան Մանրութեանց մէջ, սկը-
սեալ Դոնտոնի երեցագոյն օրինակէն
(1296ի) նաեւ «հարցնափառեր ապաշխա-
րութեան»: Նոյնպէս ութ ձայներու վրայ,
եւ իւրաքանչիւրն այլ եւ այլ տուններով,
ընդհանրապէս թուով վեց: Հարցն աւար-
տելուն՝ առանցմէ կ'երգէին մաս մը: Օ-
չինի ժամագիրքը զանոնք զետեղած է յետ
թ ժամուն: Ահա անոնց առաջին տունն
իր օրինակ. «Հայր երկնաւոր, որ առա-
քեցեր զմիածին որդիդ քո փրկիչ աշխար-
հի, բաշխելով զՀոգւոյդ սրբոյ շնորհս,
եւ միաձայնեալ ընդ անմարմին զաւրու-
թիւնսն, հանցուք աւրհնութիւն արարո-
ղիդ երկնի եւ երկրի, ասելով, Որ անդա-
դար փառ...»:

դ) 1284ի աղօթամատոյցը Հարցին յա-
ջորդ մաղթանքին մէջ փոփոխումներ ու-
նի: Յօդեա տէր մաղթանքին տուած է
այժմու մարտիրոսականին ձեւը, եւ կա-
պած «պահոց» հետ. «Մարտիրոսաց»
յատկացուցած է Աստուածածնի Ընկալ
տէր զաղաչանս (առանց քարոզին), որ
հոս առաջին անգամ կ'երեւի: Եւ «յարու-
թեան եւ յայտնութեան» տուեր է հզար
յաղթողը, անոր նախկին թերին լրացնե-
լով: Օչինինն ալ ունի Յօդեա միայն, եւ
Մարիունին՝ առոր հետ նաեւ Հզարը:
Այդ անմիարանութեան մէջ զգալի է տեղ-
ւոյս անորոշ վիճակը ներկայ շրջանիս:

ե) Մաքենեաց Խրատները կը նշանակէ
«Մեծացուցէի... քարոզն եւ աղաւթք»
լուր օրերուն, եւ 1284ի ժամագրքին մէջ
նշանակուած են այժմու ծանօթ Սուրբ
զԱստուածածինն եւ նախայիշեալ Ընկալ
տէր զաղաչանս. «զկնի Մեծացուցէին»:
Օչինը քարոզին եւ աղօթքին հետ զրած է
երգը՝ լուր օրերու պաշտամունքին մէջ,
որմէ զատած է կիրակիները, հոն ալ կրկն-
նելով Մեծացուցէին՝ առանց քարոզին եւ